



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՎԱՅՔ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Վայք

18/05/2022

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 05
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 10 անդամներ:

Բացակա էին՝ Թարո Ավետյանը, Սոնա Կարապետյանը, Աստղիկ Հակոբյանը, Կառլեն Մինասյանը, Եվա Մովսիսյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Մխիթար Մաթեվոսյանը

Նիստը արձանագրում էր ֆինասատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ՝ Ա. Հովսեփյանը

Լսեցին

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՄԱՅԻՍԻ 18-Ի ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ/

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասին համապատասխան՝

1. Վայք համայնքի ավագանու 2022 թվականի առաջին նստաշրջանի հերթական մայիսի 18-ի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Վայք համայնքի Հերիեր և Կարմրաշեն բնակավայրերի վարչական տարածքներում գտնվող հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
3. Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Վայք համայնքի 2022-2026

թվականների հնգամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին:

4.Վայքի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմը հաստատելու մասին:

5.Վայք համայնքի Վայք քաղաքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող Վայքի մշակույթի տան առաջին հարկի 814քմ. տարածքը անհատույց օգտագործման տրամադրելու մասին:

6.Վայք համայնքի Արին բնակավայրի վարչական տարածքում հանույթի աշխատանքներ իրականացնելու համաձայնություն տալու և հանույթի վաճառքի 1խմ գինը որոշելու մասին:

7. Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ծրագրին մասնակցելու համար նախաձեռնող խմբի կազմը հաստատելու, Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին դիմելու մասին:

8. ՀՀ Քաղաքաշինության կոմիտեին տեղական տուրքի և վճարի գծով արտոնություն տալու մասին:

9. Վայք համայնքի ավագանու ս/թ մարտի 9-ի նիստում ընդունված թիվ 21 որոշումը անվավեր ճանաչելու և թիվ 22, 25 և 27 որոշումներում փոփոխություններ կատարելու մասին:

10. Վայք համայնքի վարչական սահմաններում գտնվող արոտավայրերը և խոտհարքները վարձակալությամբ տրամադրելու և ամսական վարձավճարի չափն ու պայմանները հաստատելու մասին:

11. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ավագանու առաջին նստաշջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանելու մասին:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 37-Ա/

Լսեցին

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԵՐՀԵՐ ԵՎ ԿԱՐՄՐԱԾԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ՌՈՄԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին»», օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ և 15-րդ կետերով, ավագանին որոշում է՝

1. Վայոց ձոր մարզի Վայք համայնքի Հերհեր բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0.003487 հա /ծածկագիր 10-028-0150-0157/, 0.003487 հա /ծածկագիր 10-028-0107-0133/, 0.003487 հա /ծածկագիր 10-028-0107-0132/, 0.003487 հա /ծածկագիր 10-028-0150-0158 /արոտավայրերը, 0.003487 հա /ծածկագիր 10-028-0149-0127/, 0.004215

հա/ծածկագիր 10-028-0149-0126/ գյուղատնտեսական այլ հողատեսքերը, 0.0016 հա /ծածկագիր 10-028-0050-0007/ բնակավայրերի այլ հողատեսքը, Կարմրաշեն բնակավայրի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 0.003497 հա /ծածկագիր 10-027-0102-0089/, 0.003487 հա /ծածկագիր 10-027-0102-0090/ , 0.003487 հա /ծածկագիր 10-027-0102-0087/, 0.004224 հա /ծածկագիր 10-027-0102-0088/ արոտավայրերը, 0.004219 հա /ծածկագիր 10-027-0112-0031/ գյուղատնտեսական այլ հողատեսքը փոխադրել էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության՝ էներգետիկայի հողերի գործառնական նշանակության:

2. ՀՀ Վայոց ձոր մարզի Վայք համայնքի ղեկավարին՝ ձեռնարկել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 38-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ 2022-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ՆՈՐԱՅՐ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 4-րդ և 82-րդ հոդվածի 4-րդ կետերին համապատասխան ավագանին

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Վայոց ձոր մարզի Վայք համայնքի 2022-2026թվականների հնգամյա զարգացման ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
2. Ընդունել ի գիտություն, որ համայնքի սեփականություն հանդիսացող շենքերի ու շինությունների և հողերի կառավարման ամենամյա և հնգամյա ծրագրերը կազմում են համայնքի հնգամյա զարգացման ծրագրի բաղկացուցիչ մասը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-1

Որոշումն ընդունված է /կցվում է որոշում N 39-Ա/

Լսեցին

ՎԱՅՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄՐՅՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄՈՒՄ ԸՆԴԳՐԿՎՈՂ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐԻ ՔԱՆԱԿԱԿԱՆ ԵՎ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅՄԲԵՐԻ 8-Ի ԹԻՎ 43 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ԾԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով

1. Վայքի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկել ավագանու երեք անդամներ՝ անհատական հետևյալ կազմով.

ա/Անուշ Արամյան.

բ/Հրաչիկ Մանուչարյան,

գ/Վարդան Կոստանյան:

2. Ուժը կորցրած ճանաչել Վայք համայնքի ավագանու 2016 թվականի նոյեմբերի 8-ի «Վայքի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովի կազմում ընդգրկվող ավագանու անդամների քանակական և անհատական կազմի մասին» թիվ 43 որոշումը:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 40--Ա/

Լսեցին

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՅՔ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՎԱՅՔԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ 814 ՔՄ. ՏԱՐԱԾՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ՌՈՄԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով ավագնին

1. Վայք համայնքի Վայք քաղաքի վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող Վայքի մշակույթի տան առաջին հարկի 814քմ. տարածքը 10 տարի անհատույց օգտագործման տրամադրել մարզիչ՝ Սարիկ Շահինյանին՝ համայնքում բոքսի մարզաձևի ուսումնական մարզումներ կազմակերպելու համար:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 41-Ա/

Լսեցին

ՎԱՅՔ ՀԱՄՅՆՔԻ ԱՐԻՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀԱՆՈՒՅԹԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՀԱՆՈՒՅԹԻ ՎԱՃԱՌՔԻ 1 ԽՄ -Ի ԳԻՆԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՌՈՄԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Տեղական ինքնակառավարման մասին օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և Հայաստանի Հանրապետության 10.05.2019 թ-ի թիվ 572-Ն որոշման կարգի 2-դ մասի 4-րդ, 7-րդ և 9-րդ կետերով համայնքի ավագանին

1. Տալ համաձայնություն « Վայք ՃՇՇ» ՓԲԸ-ին Մ-2 մայրուղու Երևան-Մեղրի կմ 150+700-կմ 167+600 հատվածի հիմնանորոգման աշխատանքների ընթացքում, գաբիոնային շարվածքի իրականացման համար Վայք համայնքի Արին բնակավայրի վարչական սահմանից, հրաձգարանի հարակից տարածքից՝ անդեզիտոնային բազալտ գրունտի հանույթ իրականացնելու:
2. 1 խմ հանույթի գինը սահմանել 1000/ մեկ հազար/ ՀՀ դրամ:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 42-Ա/

Լսեցին

ՍՈՅԻԱԼԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՁԵՆՆՈՂ ԽՄՔԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ԴԻՄԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՆՈՐԱՅՐ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ և 42-րդ կետերով

1. Հաստատել Վայք համայնքի կողմից Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման Ծրագրի Բաղադրիչ 2-ին մասնակցության նպատակով ձևավորված նախաձեռնող խմբի կազմը՝ համաձայն սույն որոշման հավելվածի:
2. Սոցիալական Ներդրումների և Տեղական Զարգացման Ծրագրին մասնակցելու

համար դիմել Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամին /ՀՏՀՀ/ համայնքի հետևյալ առաջնահերթ խնդիրներով: Համայնքի կարիքների համար աղբատար մեքենայի և աղբամանների ձեռք բերում, հացահատիկահավաք կոմբայնի ձեռք բերում:

3. Առաջարկի հաստատման դեպքում կատարել 5% ներդրում ՄՆՏԶ ծրագրի պահանջներին համապատասխան:

4. Ծրագրի իրականացման դեպքում ձեռք բերված տեխնիկայի և աղբամանների շահագործման և պահպանման անհրաժեշտ ծախսերը ներառել համայնքի բյուջեում:

5. Հանձնարարել համայնքապետարանի համապատասխան աշխատակիցներին պատրաստել և ՀՏՀՀ-ին ներկայացնել համապատասխան առաջարկ ծրագրին մասնակցելու վերաբերյալ:

6. Ձեռք բերված տեխնիկան և գույքը չսեփականաշնորհել կամ չօգտագործել այլ նպատակներով ծրագրի ավարտից հետո 15 տարվա ընթացքում:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 43-Ա/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻՆ
ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ԵՎ ՎՃԱՐԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ՌՈՄԱՆ ՄԿՐՏՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով և <<Տեղական տուրքերի և վճարների մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի պահանջներով

1. Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության կոմիտեի կողմից Վայք համայնքի Գոմք բնակավայրի վարչական տարածքում գտնվող միջնակարգ դպրոցի կառուցման աշխատանքների շինարարության թույլտվության տրամադրման համար սահմանել արտոնություն տեղական տուրքի զրոյական դրույքաչափի կիրառմամբ:

2. Քաղաքաշինության կոմիտեի կողմից Գոմք բնակավայրում կառուցվող դպրոցի շինարարական աշխատանքների ավարտը փաստագրելու և շահագործման թույլտվությունները ձևակերպելու համար սահմանել արտոնություն տեղական վճարի զրոյական դրույքաչափի կիրառմամբ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 44-Ա/

Լսեցին

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ Ս/Թ ՄԱՐՏԻ 9-Ի ՆԻՍՏՈՒՄ ԸՆԴՊՈՒՆՎԱԾ ԹԻՎ 21 ՈՐՈՇՈՒՄԸ ԱՆՎԱԿԵՐ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ԹԻՎ 22,25 ԵՎ 27 ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 38-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով

1. Անվավեր ճանաչել Վայք համայնքի ավագանու ս/թ մարտի 9-ի նիստում ընդունված «Վայքի համայնքապետարանի աշխատակազմի գործավարության կարգը հաստատելու մասին» թիվ 21 որոշումը:
2. Վայք համայնքի ավագանու ս/թ մարտի 9-ի թիվ 22 -Ա որոշման մեջ «Ա» նշագրման փոխարեն գրել «Ն» նշագրումը, թիվ 27 -Ա որոշման մեջ «Ա» նշագրման փոխարեն գրել «Ն» նշագրումը:
3. Վայք համայնքի ավագանու ս/թ մարտի 9-ին ընդունված թիվ 25 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները «Իրավական ակտերի մասին օրենքի 72-րդ հոդվածի 1-ին կետով» բառերի փոխարեն գրել «Նորմատիվ իրավական ակտերի մասին օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետով» բառերը: «Կառավարության 2011թ. փետրվարի 24-ի խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությունը հաստատելու և ՀՀ Կառավարության 2006թ. հունիսի 22-ի թիվ 912-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին թիվ 164-Ն որոշմամբ» բառերի փոխարեն գրել «Հայաստանի Հանրապետության 2016թ. հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշմամբ» բառերը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 45-Ա/

Լսեցին

ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԸ ԵՎ ԽՈՏՀԱՐՔՆԵՐԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԱՄՍԱԿԱՆ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ՉԱՓՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 56-րդ հոդվածի 5-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հոկտեմբերի 28-ի «Արտավայրերից և խոտհարքներից օգտվելու կարգը սահմանելու մասին» N 1477-Ն որոշման համաձայն

1.Տալ համաձայնություն Վայք համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող արոտավայրերը և խոտհարքները մինչև երեք տարի ժամկետով վարձակալությամբ օգտագործման տրամադրելու մասին համայնքի ղեկավարի առաջարկությանը՝ ամսական վարձավճարի չափը հաստատել արոտավայրի և խոտհարքի տակ գտնվող հողամասի հողի հարկի դրույքաչափին հավասար:

2.Համայնքի վարչական սահմաններում գտնվող արոտավայրերում ամառային արոտը կազմակերպելու համար՝

ա/մանր եղջերավոր կենդանու մեկ գլխաքանակի համար սահմանել արոտավարձ ամսական 42 ՀՀ դրամ,

բ/խոշոր եղջերավոր կենդանու մեկ գլխաքանակի համար 360 ՀՀ դրամ :

3.Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակման հաջորդող օրվանից:

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 46-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՎԱՅՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱՎԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ջեկ. Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով՝


1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Վայք համայնքի ավագանու առաջին նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ սահմանել 2022 թվականի հունիսի 17-ին, ժամը՝ 15:00-ին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից

Կողմ-10 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 47-Ա/

Ավագանու անդամներ


ՇՈՒՇԱՆԻԿ ԱՍԼԱՆՅԱՆ



ՀԱՅԿ ԱՎԱԳՅԱՆ



ԱՆՈՒՇ ԱՐԱՄՅԱՆ



ՄԻՄՈՆ ԲԱԲԱՅԱՆ



ԱՐՏԱՎԱԶԴ ԽԱԶԱՏՐՅԱՆ



ՍՈՒՍԱՆՆԱ ԿՈՍՏԱՆՅԱՆ



ՎԱՐԴԱՆ ԿՈՍՏԱՆՅԱՆ



ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ



ՀՐԱԶԻԿ ՄԱՆՈՒՉԱՐՅԱՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԶԱՆՈՅԱՆ



Համայնքի ղեկավար

ՄԽԻԹԱՐ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ



Նիստին արձանագրեց՝ Ա. Հովսեփյանը

